

1864.

19 Օգոստոսի
լստ ճիև տուարի :


Թիի 25.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ :

1864.

31 Օգոստոսի
լստ նոր տու.

Registered at the General Post-Office for transmission abroad.



ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԵՍՏԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ :

Հրատարակիչն, հրատարակիչն է Բաժանորդան
Քիտի Կրտսերներն է Մանչեսթեր :

—Նամակ, յոբանաճ, ձերք էն պահանջ (առար է ծա-
խոյ փոփոյ) ուղևն յանան Առաջի Կարապետ Վ.
Կահնուարեան, ձերք էն այդտե :

M. le Chevalier K. Vardapete Shahnazariantz,
151, Rensford Street, Manchester, (Angleterre.)



Տարեկան գինն հանդերձ ծախսի փոփոյ, ուր էրկան
Առկելոյ էն Ֆրանսայի լիպայեան էն լիպայեան, է 25 շ. ֆ.

- Այն փոփոյն զար փոփոյն ծախսի առարդի
փերայ է :
- Վերջահատան 13 ,,
- Երեսուցի 7 ,,
- Մեկ փերեկի գինն է Մանչեսթեր է 5
այլուր 7
- Բաժանորդ ձերք էն ամեն տարի էն փոփոյն լիպայեան,

Ստորագրողի հանձն տեղիքն Են Կառնոնամուտոյի Սարգիս Աղայ Մ. Հրատարակիչն սենեակին ի Ղալաթա. — Իզմիր Մարտիոսեան Յովոր
Աղայի սենեակին. — Հալեպ Յովհաննէս Աղայ Գիրքճեանովի սենեակին. — Սուրբ Երուսաղէմ Արժանապատիւ Եսայի Վարդապետի սենեակին.
— Աղբերանդրիս (Լիպայեան) Տէր Գառնարեան Ղազարոս Աղայի սենեակին. — Կալկաթա Պ. Պետրոս Սարգսեանցի սենեակին. — Բաթափա Պ.
Մանուկ Որդանանեանի սենեակին. — Լոնդոն Աղայ Մարտառոֆֆի սենեակին. — Փարիս Աղայ Պօղոս Արփաճեանի սենեակին. — Մարտիկա Աղայ
Մարգար Պատկիկեանցի և Աղայ Յարութիւն Անդրեանեանի սենեակներն : Առայժմ ուղղակիքն կրնան վերայդրեալ սենեակաց մէկն ստանալ մինչև
որ յատուկ գործակարներ հաստատուեալ բազմազայ և ընթերցասէր բազարներ :

ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ :

Տեղիքն Բաժանորդան Քիտի Կրտսերներն է
— Լիպայեան. — Առարդի :

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Պրուսիոյ եւ Ավստրիոյ պատկառներն, որք
միշտ իրարու թակարդ լարելէ, իրարու ներդար-
ծու թիւն խորատակել է Գերմանիոյ իրողութեանց
վարչութիւնն, ամեն մէկն, իր ամեն մէջ ամիս-
փոյն չէին դադարէր, այժմ Գանձարգի արիւնտ
կողմանն, եթէ կարելի է, անխառն վայելելու
համար, իրարու մտայնք, սիրելի եւ զոգորիկ
բարեկամի զինակ երեսուն վերայ անցուցեր են
մինչև որ որոն օրհասն անօրինուի : Այնուհետեւ
տարակից չկայ, որ նախնի նախնան վերստին
արթննայ եւ արդի առժամանակեայ սիրելիքն
յայնժամ օրերիմ թշնամի ըլլան իրարու :
Պրուսիոյ Վեհափառն Ավստրիոյ հանքային
ջուրերն խմելն եւ անորմակ ստանալն յետոյ
Վիեննայ գնաց Հունգարիոյ գիւններու անուշա-
համութիւնն ճարակել, որ կայսր անուանեալն ի
պատիւ նորա 40,000 զորաց հանդէս ըլլաւ, որպէս
թէ Ավստրիա միանող եւ միտապարզ զինուորա-
կան պետութեանց կարգէն ըլլար : Ինչև իցէ, առ
այժմ, այս կատակա բաւական ծիծաղաշարք է :

Գանձարգի իրակարող պատգամաւորներն Վի-
եննայ գաղով բանախօսութիւնն շէին սկսաւ. եւ
կյուսացուի թէ վերջնական իտաղալութիւնն
ստորագրուի մինչդեռ Պրուսիոյ արքայն հոն է.
սակայն Գանձարգ հանդարտ չէ, իսկ մէկ իսկ
բաւն շատ և կարող անձերու միտքն կյուզէ : Ար-
քայի անձն առիթ կհամարուի անցեալ կորստաբեր
պատերազմին և երեք դրսութեանց կորստանն.
ուստի, հասանականարար, մեկ յեղափոխութիւն
կարելի է, որ ծագի, Գրիտաիեն արքայն իր ա-
թոնն հազարուի և Օգոստեմբուրգի կամ այլ
մերձաւորացին արեւմտու Գանձարգի գահոյրի
վերայ բազմելով վերստին պատուեալ մասերն
միացունէ :
— Արեւելի սպասամբութիւնն տակաւին բո-
լորովն չէ դադարէր : Սի-Մուհամեդ Բեն Համադայ,
որ Մահմադ մղուերէր, դարձաւ դէպ ի Արեւելք և
Լազուստի Լալաներն գրգուելով ոտք հանեց,
որք Տագուեն ձգելով իրենց հունձի և ընակարան-
ներուն հետ՝ սպասամբներու հետ միացան այրելով
և արեւել իրենց ճակատ վերայ տուն, խան և գիւղ
և սպանելով անխնայ ամեն հանդիսած Եւրոպա-
ցիներն :
— Հրախայն Ամերիկայի լարերն, զրեթի ոչ
ինչ են : Պետերբուրգի, Մալմոսայի և Վորքի
առջև Հրախայնի և Հարաւայնի վերայ կհարդեն
կատաղորէն ստանց մէկ գործ աւարտելու : Կա-
մաւոր զինուորագրութիւնն ամենեւին յատաջ
չբողիք և Եթիոյ գաւառք, որոց զլխաւորն է Կի-

Եօրին, կանոնաւոր զինուորագրութեան դէմ
բողոքեցին, որ Սեպտեմբերի ճին պիտի սկսի-
ուստի խռովութեան երկիւղ կայ : Կիւ Եօրի ամ-
սոյս 11ին մեծ գրոհ տեղի ունեցաւ ի պատիւ Մակ
Կելլան զորավարին, որ եւ առաջարկուեցաւ
անոր ընտրելակցութիւնն ի տեղի Պ. Լինկոլնի :
— Ֆրանսայի զինուորութիւնն Մեքսիկա կարելի
հետզհետէ հին Նախագահի կուսակիցներն : Ա-
նոնք տիրեցին նաեւ Ղիւրանդոյն : Ուրաղո զօրա-
վարն 5,000 հոգիով անձնատուր եղաւ : Մարքել
զորավարն Չիտամարո մեծ յաղթութիւն գործեց :
— Մեղինի ապստամբ Արաքներն հնազանդեցան
Օսմանեան Կառախարութեան : Մեղինն գարձող
մէկ դերվիշ՝ Իզմիրի մէջ աշխարհի վերջըն բարո-
ղելով բաւական յուզանոց և անկարգութեանց
պատճառ եղաւ, գրգուելով ոտանց Մահմետակա-
նայ կատաղութիւնն եւ այլոց ընչաքայտութիւնն :
Տեղական իշխանութիւնն ի հետեւումն զխոտոր-
իթեանց Ֆրանսայի հրեպատին, գլխաւոր խոտա-
լարներն բռնելով՝ ամեն բան բարեբախտարար
զաղբեցաւ և ժողովուրդն երկիւղ զէ սպասեցաւ :
Աղբերանդրիս նստող Ամերիկայի հիւ պատի Փո-
խարայի հետ ունեցած վէճն աւարտեցաւ. եւ
հրեպատն իր յարաբերութիւններն սկսաւ տեղա-
կան իշխանութեան հետ : Կուրար փաշան (ուղ-
ղախոս Հայ) Աղբերանդրիս հասաւ ողջամբ, եւ
իսկայն զէպի Գահիրէ շուեց, ուստի Պոլիս դառ-
նայ պիտի ջրանցքի ինդիքն լուծելու համար :
— Հելլոսոյ Պիւնել քաղաքին մէջ արիւնաշէղ

մէկ խառնուրդին տեղի ունեցաւ Պ. Գնեվիերի ընտրութեան ապօրինաւորութեան պատճառաւ . քաղաքի փողոցներն ստժամայն պատնէշներով փակեցին և վառօջն և հրացանն բաւական արիւն թափեցին : Տերական խիտանութիւնն խառնուրդին չհրնալով զապել Դաւնակցութենէն օգնութիւն խնդրեց , որ մէկ րատայօն երկրական զօրք հոն խրկելով՝ խաղաղութիւնն վերահաստատեց :

— Անգլիոյ Վուրմար անուն տնտեսի սոսկալի հրկիզութիւնն 7 միլ երկայնութեամբ և 3 միլ լայնութեամբ ոչ միայն ահաղին նախական վնաս պատճառեց . տէրութեան եւ ժամաւորաց , այլ եւ տեղ տեղ , ժողովրդեան զգացած սոժաւթեանն սկսեցին վկայեց . վասն զի խոտորմն շատ տեղ ծայր կտայ բանի մի ժամանակէ խլեր , այլ եւ այլ յայտարարութիւններով : Բեղփատի ընտանի խառնութիւնն զեռ չստարած՝ կճանուցանեն թէ Վուրի , Գոնգալի և Կորի համանգաւտայն սկսան ազմուկը և կուրբ :

— Ազնիւ Լորդ Պալմերստոն՝ Տիւրքոյն քաղաքի մէջ մէկ երկար ճառ խօսեցաւ , սկիսելով թիւն ընկերով հին և նոր աշխարհաց մէջ վերջին տոնններս պատահած քաղաքական նշանաւոր իրողութեանց վերայ : Լորդ Պալմերստոն՝ կիսըծէ թէ կառավարութիւնն , որոյ ղեկավարն ինքն է , վերջին երկու տարուան դժուարութեանց մէջ , Անգլիոյ արժանաւորութիւնն իր տեղն պահեց եւ թէ Անգլիա երթը պնչալի մեծ և օրինաւոր համարումն չէ ունեցեր ինչպէս այժմ : Մեր կողմէն սովորութիւն կըլար եթէ Ազնիւ Լորդի պատրանքն փրկովինք , զոր սուղադոյին կյանքնեմք ջնջել :

— Իրեզդէն եկած մէկ հեռագիր՝ արքայի Խորհրդարանն գոցելու աղաքաւ խօսած ճառն կհամառօտէ : Արքայն կյուսայ որ Կքսութեանց խընդիրն շուտով լուծաի համեմատ Գերմանիոյ իրաւանցն և ըզմին :

— Սոր Հենրի Բուրկեր՝ նորին թոյլտուութիւն կորահանջէ Անգլիոյ զօրքն Կղիպտոսի վրայով Հնդկաստանն՝ անցունելու համար : Պոլիս՝ ամեն կարեւոր խնդիրներն , մանաւանդ Լիբանանին , կախ կմնան Անգլիոյ և Յրանաւայի ղեկավարաց բացակայութեան պատճառաւ :

— Հիւսիսային Ամերիկայի Կապարա Ֆրեզատոն Հարաւայնոյ Գէորգիա ծովասարաւան բռնեց Փորտուգալ երթալու ատեն , որ և նաւաստիներն ցամաք հանելով կարանաւոր նաւն Սուտորի խրկեց :

— Ռիժմոնդի սրտուծանական լուրերն Օչոտտոսի Ցէն կճանուցանեն թէ Հիւսիսայինք տիրեցին Գեննիս բերդին , և թէ Հարաւայնոյ բոլոր նաւատորմն բաց ի մէկ նաւէ , կամ ընկզմեցին կամ ափուներն նետեցին կամ ղերեցին :

— Երկրան բազմաձեւն զնդով Ենեանդոյի ճորին մէջ կյաւաջէ ընդդէմ Հարաւայնոյ :

Սու-Եօրկի մէջ բազմախուռն մէկ զրոհ տեղի ունեցաւ , ուր ըստ Հերալդի 100,000 անձինք միաբանեալ՝ պատարակեցին Պ. Լինկոլնի վարչութիւնն և բուէ սուէին Մակ Կլեյլանի անոր յաւրդեղուն յուսալիկայ Մարաին մէջ :

— Անեհալի դատաններուն և Տրեւտի (Տրանտ) քաղաքին մէջ Ալտարիոյ կառավարութեան հրամանաւ՝ բազմութիւ տուներ խուզարկուեցան եւ տնհամար անձինք կարանաւորեցան :

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ

[Տիւրքի 22.]

Վան քաղաք 29 հոկտ 1863

Աստուածագոր և Պերճապատիւ Աղբալեա Պէյ . պարծտնր Աղբիս Հայոց . և բարեբար մեզ ի փառս Աստուծոյ

Ձեր ինչ յաշխարհի բարի , սրբո՛ւ չհակառակեցի չարութիւն մարդկան : Կտուց Սուրբ Անապատն , որ ի հարիւրաւոր ամաց հետէ կառուցեալ կայ ի ծովածոցն Վանայ լինել վայր սրբասահման , և տեղի աղթից հրեշտակակրօն միանձանց հրաժարեցոյ յաշխարհէ , և յատկացեցոյ յաղթս մշտաւ սրտուծն բազկատարածութեամբ վասն խաղաղութեան ամենայն աշխարհի , և վասն անդորրութեան կենաց , եւ փրկութեան հոգւոյ ընդհանոր օրհնեալ Աղբիս Հայոց . ուր կան այժմ բազմաթիւ անձինք աղթակերաց , և անխափան կատարեն զսահմանեալ կարգս կրօնաւորութեան իւրեանց . ի վերայ այսր ամենայնի կրօն հարածանս բազմապատիկս ի հաւատոյ թշնամեաց ի Տաճիկ բնակչոց Մալլապատրճ գիւղի՝ որ միով ժամաւ հետի կոյ ի Սուրբ Անապատն Կտուցայ : Արդ թողեալ զամենայն նեղութիւնս զորս սանն նորա աղթարար Միաբանութեանն ի ծածուկ և յայտնի միայն գոցս զվի չարակրօնութիւն ունիւք ծանուցանել Ձերումը Աստուածագոր Պերճապատութեան , որ այս ինչ է . վասն զի ընդարձակասահման դաշտաւայրս Կտուց Սուրբ Անապատի բոլորովին աւազուտ ապաւսածուս և անճրդի և հեռաւարար գոլով աներբ և զուրկ ի բարգաւաճութենէ . հոգեւոյս նախնիք ի հայթայթանս սարուստի Միաբանութեան շինեալ են յԱննս վանք կոչեցեալ գիւղին առ եղերք Մարմեա գետակին զվի ընտիր ջրալաց քառաչեայ , զի ի վարձուց անտի շահեցցին միարանք , և շարունակեցցեն զպարտաւորութիւն պաշտաման իւրեանց : Բայց յիշեալ Մալլապատրճ գիւղացիք Մահմետականք , ըստ մեծի մասին կախարդք եւ ոխերիմ թշնամիք յիշեալ Սուրբ Միաբանութեանն՝ չկարելով այլով իւրք աւելի վնասել նոցա , զպատրուակ չարութեան իւրեանց կախալեն զճրաղացն . յոր եկեալ միշտ առ ի ազալ ցորեան եւ զայլ տրմտիս , սկսանին չարչարել զորս ի նմա Հայազգիս , զճաղապարանս եւ զցորեանոյ տեարս . է որ գողմանս , եւ է որ ի ջուրս աման զարմտիս նոցա եւ մորմօրեցուցանեն զնոսա . եւ է որ յարձակին ի վերայ նոցա չարաչար հարուածովք . վասնորոյ զօր ամենայն անպակաս են կառ եւ կուր , եւ հարուած ի չարութենէ Մալլապատրճացոյ . ի սոյն միջոցի զըջարմակ Հայազգի գիւղացիք յաճախեալ ի ջրալաց անդ , զարձեալ չարաչար հարուածս կրեն ի Մահմետականաց անտի , և երթան բոլոր բանանս առ վանահայր Պօղոս վարդապետն , որ եկեալ ողոր բանիւք աղաչէ զնոսա մի նեղել զՀայազգիս . նորա զապանարար յարձակին ի վերայ նորա , հայհոյեն , թշնամանեն և սաստիկ հարուածս տուեալ նմա փետեն զհերս մօրուացն և իսայտառակին : Երջնակս արացի հարեալ ընդ փոր ջաղացպան Յօհաննէսին առնեն կիսամեա . որ կոյ յանկողնի : Վասն որոյ աղաչեմք զԱստուած ամանս զթաժութիւն ձեր ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ սրբոյ անարատ կրօնիս մերոյ , շնորհ արարեալ զոյս հարստահարութիւն ծանուցանել ի Բ. Պատն , զվի բարձրաշունչ հրովարտակ հանեալ առաքելի նոյն Սուրբ Անապատն , զի այսո՛ւ հետե Մալլապատրճցիք այլ ևս մի սոճցեն

զարմտիս իւրեանց ի ջրալաց անդ . այլ յիւրեանց ջաղացն աղապեն , որ կոյ ի նոյն Մալլապատրճ գիւղին . կամ յայլ տաճկարեակ գիւղս տարցեն որ կան մերձ ինքեանց . որով աղաւտեալ յազմալի Միաբանութեանն ի հարստահարող ձեռաց՝ անտի կացցեն , միասցին , սարսուտար կենօր բարեմաղթ առ տէր՝ վասն պատուական կենաց ձերոց որպէս և մեր :

(ստորագրութիւն)

Իգնատիոս Եջիսկոպոս Վասպուրական երկրի Լիւթ Սուրբ Անապատի անարժան Վանահայր Գալոր խոնարհ Եպիսկոպոս Պիտի չարանակութի :

ԿՐՕՆԱԿԱՆ

[Տիւրքի 20]

Յօդուած 1. « Գերագոյն Երկրպագութի մասնուանէն յետոյ , կարգինալներն իրենց բացակայ պաշտօնակիցներուն կարասեն 10 օր միայն . այնուհետե թաղումն և ինօրեայ պաշտօնակիցն կատարելով սոյն քաղաքին մէջ , ուր հանգուցեալն կրնակեր , անոր կեցած սպաւտին մէջ կխակուին , ամեն մէկն մի մի տիրացու կամ աշխարհական ծառայով գոհ ըլլալով կամ թէ իւրարմեջիւր կարգինալ երկու անձն ընտրելով եթէ բացարձակ հարկն պահանջէ : »

Յօդուած 2. « Հանգուցեալ Պապի բնակած պալատին մէջ ժողովն կամ կոնկլաւն կպումարուի . ուր ամենքն մէկ տեղ կհարուին ստանց միջնորմի , վարագորի կամ ինչ և իյէ օթոցի պահելով միայն մի գաղտնի մենարան : »

Յօդուած 3. « Ոչ ոք կարող է ժողովի ատեն կարգինալաց մօտենալ . ոչ որ կարող է անոնց հետ ծածուկ խօսիլ . և կարգինալներն չեն կրնար ընդունիլ ո՛ր և իյէ անձն բաց ի անոնցմէ , որք առաջիկայ եղածներու միաշունչ հաւանութեամբն կկոչուին և մի միայն ընտրութեան օգտին համար : Ոչ ոք կարող է դեպան կամ ինչ և իյէ նախկ խաւրել կարգինալներուն և ոչ ժողովականաց մէկուն ստանց բանադրուելու : »

Յօդուած 4. « Կոնկլաւի մէկ լուսամուտն բայց կճգեն կարգինալաց կերակուրն հանգիստ ներս մտցունելու համար . այլ անկէ երեւմտ ընելն արգիլուած է ու՛մ և իյէ : »

Յօդուած 5. « Կարգինալներու կոնկլաւ մտնելն երեք օր յետոյ , եթէ նոր Պապն չէ ընտրուեր , եպիսկոպոսներն եւ կոնկլաւի այլ պահապաններն , օգտոր է , արդիւնէն , որ հետեւեալ 5 օրերն , կարգինալաց սեղանի վերայ մէկ ապակէն աւելի ճաշ և նոյնչափ ընթրիք բերուին : Այս 5 օրերս անցնելէն յետոյ պահապաններն չպիտի ներեն որ անոնց հացէն եւ ջուրէն զտտ աւելի բան արուի մինչև որ ընտրութիւնն ընկուեն : »

Յօդուած 6. « Այս միջոցիս կարգինալներն ոչ ինչ չեն ստանար ստաբելական սենեակին եւ ոչ իրենց եկամուտէն , որք , Աթոսոյ պարսպութեան ատեն , մէկ անկեղծ եւ հաւատարիմ անձի տեսչութեան տակ կմնան , որ զանոնք կոնտուէ : »

« Պապի մահուամբն ամեն կերպեցական եւ դատաւորական պաշտօնք ամենայն իրաւաւորք

Անթախ Գործարար — Grey T Cloths.

Table with columns for size (e.g., 12x10, 12x12), width (e.g., 20, 22), and price (e.g., 5/3, 6/0).

Գինն անխորտու էն :

Անթախ Անթախ — Grey Long Cloths.

Table with columns for size (e.g., 17x17, 14x11), width (e.g., 70, 80), and price (e.g., 17/9, 19/6).

Գինն անխորտու էն :

Անթախ Շորտներ — Grey Shirtings.

Table with columns for size (e.g., 12x9, 14x10), width (e.g., 54, 60), and price (e.g., 13/0, 13/9).

Գինն անխորտու էն :

Անթախ Մերմեր — Grey Jacquets.

Table with columns for size (e.g., 10x8, 12x12), width (e.g., 21, 22), and price (e.g., 5/9, 6/0).

Գինն անխորտու էն :

Անթախ Մուլ — Grey Mulls.

Table with columns for size (e.g., 10x8, 10x9), width (e.g., 1, 17), and price (e.g., 4/7 1/2, 4/10 1/2).

Գինն անխորտու էն :

Ներսի Ստախիտ — White Tanjibs.

Table with columns for size (e.g., 12x12, 14x10), width (e.g., 20, 22), and price (e.g., 5/4, 5/6).

Գինն անխորտու էն :

ՄԱՆԱԾՔ

Վաղար Տուրա — Water Twist.

Հասարակ. Երկրորդական. սառնին.

Table with columns for size (e.g., 4/14, 16/24), width (e.g., 12, 20), and price (e.g., 1/4 1/2, 1/7 1/2).

Գինն անխորտու էն :

Մուլ Տուրա — Mule Twist.

Table with columns for size (e.g., 4/14, 16/24), width (e.g., 12, 20), and price (e.g., 1/1 1/2, 1/7 1/2).

Գինն անխորտու էն :

Էքստրա Մանած — Extra Hard.

Table with columns for size (e.g., 4/14, 6/24), width (e.g., 12, 20), and price (e.g., 1/8 1/2, 2/0 1/2).

Գինն անխորտու էն :

Արհեստի Կամած Հրահար և Կարեր.

Double Yarns, Knittings, and Sewings.

Table with columns for size (e.g., 4/14, 6/24), width (e.g., 12, 20), and price (e.g., 2/1 1/2, 2/7 1/2).

Գինն անխորտու էն :

ԲՈՒՐԳ : Լիբրայ և Լոնդոն : 19 Օգոստոս :

Այս շաբաթու սնունդներն վար գինն արդ Երան. բայց գինն բուն սպասարհի մեծ քանակն վաճառողներ յառաջ անբառ : Երբայիտու ուրիշ կողմերն իրեն լու. համար խնդրեն խիստ նուազ է, և Ամերիկայի առանձին գրեթե բնա. գործը ըրած չունին :

Table with columns for item name (e.g., Ապրիլի Լոնդոն, Մեղմի լուսն) and price (e.g., 1/6, 2/3).

ՄԵՏԱՔԱՆ : Լոնդոն : 19 Օգոստոս :

Վաճառում. գինն չէ, բայց գինն ուժեղ էն :

Table with columns for item name (e.g., Խաւիտ, Միւսեր թեթաւ) and price (e.g., 22/0, 25/0).

ԿԵՆԵՔԻ ԱՊՐԵՆՔ :

Սորբի Կարտե Երան Երան 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100

Table with columns for item name (e.g., ՇԱՔԱՐ, Բնադրի ճեղքակ) and price (e.g., 44/0, 49/0).

ՍՈՒՐՃ (բաճկ) Միւսեր թեթաւ Երան Երան 92/0 93/0

Գործու Որդերն 76/0 85/0

Երաններն Եր Եր Կին Եր Կին

Large table with multiple columns for various items and prices (e.g., ԲՈՒՆՁ, Մարտի, Կարտի, Գործու).

ՏԵՐ ԵՒ ԽՄԵՐՔԻՐ Կ. Վ. ՇԱՆՆԱՋԱՐԱՆՅԱՆՅ

Printed and published by K. Vardapete Shahnazarian, 151, Runcorn-street, Chorlton-on-Medlock, Manchester. --- Tuesday, August 31, 1864.